խնամութեանց՝ ենթարկեսցի ապաշխարութեան ըստ ցուցման գ) յօդուածոյն։

Ի վերայ իսկականին ստորագրեալ է՝
ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Կաթողիկոս Ամենայն Հայոց.

Ի 4 Յունուարի 1902 ամի
և ըստ Տոմարիս ՌՅԾԱ.
ի Հայրապետութեան մերում Թ. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ.
Թ. 4.

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ ԷՋՄԻԱԾՆԻ. Շնորհունակ Միաբանի Մայր Աթոռոյս Գալստի Տ. Մկրտչեան Հայրապետական օրհնութեամբ յայս առնեմք։

Յամին 1897 *Կոնդակաւ մերով նշանակեցաք խմբագիր «Արարատ» ամսաթերթի Մայր Աթոռոյս զՏ. Կարապետ վարդապետն՝ տեսուչն հոգևոր ճեմարանիս, որ յօրէ անտի ցարդ իբրև խմբագիր և իբրև գլխաւոր վարիչ կատարէ զիւրն պաշտօն։ Սակայն զդացեալ Մեր զծանրութիւն պաշտաման նորա ի ճեմարանի և արտաքոյ յայլ պաշտամունս՝ Մեք բարւոք համարեցաք ազատ կացուցանել զնա ի պաշտամանէ խմբագրութեան «Արարատի»։*

Եւ քանզի ի սկզբանէ ցարդ աշխատակցեալ կաս նոյն ամսաթերթին գիտական, պատմական, քննադատական և այլ պիտանի և օգտակար յօդուածովք և ծանօթք են Քեզ ամենայն հանդամանք կազմութեան և պատրաստութեան թերթին, Մեք արժան համարիմք սովին Հայրապետական Կոնդակաւ կարգել զՔեզ խմբագիր «Արարատ» ամսագրոյ Մայր Աթոռոյս ի 1-*էն յառաջիկայ Յունուար ամսոյ, հաւատի դոլով միանդամայն՝ եթէ հաճելի է այն պաշտօն Քեզ և Դու՝ որպէս ցարդ իբրև աշխատակից նախանձաւոր*

հանդիսացեալ ես կանոնաւոր հրատարակութեան նորին և հրատարակելի նիւթոյն, յետ այսու իբրև լիովին պատասխանատու առաւելագոյնս ես ջանայցես ընտիր ընտիր աշխատակցօքև նիւթովք՝ համակրելի յաչս հասարակութեան և գիտական աշխարհին կացուցանել զ«Արարատ»ն, որոյ վասն մաղթեմք Քեզ զկատարեալն յաջողութիւն և առողջութիւն. մնալով միշտ աղօթարար՝

Ի վերայ իսկականին ստորագրեալ է՝
ՄԿՐՏԻՉ Կաթողիկոս Ամենայն Հայոց

ի 22 Դեկտեմբերի 1901 ամի
և ըստ տոմարիս ՌՃԾԱ.
ի Հայրապետութեան Մերում Թ. ամի
յԱրարատեան Մ. Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ.
Թ. 1988

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱ-ՑԵԼԻ կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի. *Ողջոյն և օրհնութիւն Յակոբայ Մանանդեան և Սիրականի Տիգրանեան։*

«Արարատ»ի խմբագրապետ կը հաղորդէ մեզ, որ Դուք յօժարամիտ ոգւով յանձն առնում էք «Արարատ»ի խմբագրութեան աշխատակից և օգնական լինել։ Առ այս իմ շնորհակալութիւնս յայտնելէն յետոյ, յատկապէս խնդրում է Հայոց Հայրիկ, որ լեզուին մաքրութեան և ճշդութեան ըստ ամենայնի հոգ տանիք. յօդուածներ մեծ խնամով և ընտրովի գրէք, որ հայ ժողովրդի կրթութեան համապատասխանէ բարոյապէս ըստ ժամանակի պահանջման, ի բաց թողլով իմաստասիրական և փիլիսոփայական խորիմաստ գաղափարներ։ Եւ Դուք քաջ գիտէք՝ թէ ո՞յք են «Արարատ»ի ընթերցողներ։

Հայրիկ կ'օրհնէ զՁեզ և կը յուսայ, որ «Արարատ»ի խմբագրութիւն աւելի ևս փառաւոր կացուցանէք ի փառս Մայր Աթոռին և յաւէտ ևս պարծանք խմբագրող անձանց։

Ի վերայ իսկականին ստորագրեալ է՝

ՄԿՐՏԻՉ Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ի 23 Յունուարի 1902 ամի
և ըստ Տոմարիս ՌՃԾԱ.
ի Հայրապետութեան մերում Թ ամի
ՅԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ.
Թ. 99.

ԿՐՕՆԱԿԱՆ

ԵՁՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՐԱՏՆԵՐԸ

Աստուածասէրն իւր կամքից ինչպէս թշնամուց կղգուշանայ։

Լաւ է յստակ խորհրդով ննջել, քան պիղծ խորհրդով աղօթք մատուցանել և վարձք չառնել ու զուր աշխատիլ։

Ամրապնդիր մարմնդ նեղութեամբ և սիրտդ Աստծու երկիւղովը, որ աներկիւղ լինիս սատանայի մահաբեր նետերից։

Ով երկիւղածին սիրում է՝ Աստծուն սիրոյ արձան է կանգնեցնում և սատանային՝ անհաշտ թշնամութիւն։

Սէրն ու երկիւղը քեզ բնութիւն արա, որ խաբէութեամբ չյոգնիս։

Որչափ զրկուիս և յոգնիս և նեղուիս և համբերես՝ այնչափ անապական դանձ կպատրաստես քեզ երկնքումը։